ՀՏԴ : 929 : 947.925 Քոսյան

DOI: 10.54503/0135-0536-2026.2-292

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ
(Ծննդյան 70-ամյակի առթիվ)*

Հայկական արևելագիտության արդի պատմության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում խեթագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամ Քոսյանը, որի գիտական, մանկավարժական և կազմակերպչական գործունեությունը տասնամյակներ շարունակ էապես նպաստել է Հայաստանի և հարակից երկրների հնագույն պատմության ուսումնասիրմանը: Նրա 70-ամյա հոբելյանը պատշաճ առիթ է գնահատելու այն նշանակալի ավանդը, որ գիտնականը ներդրել է գիտության զարգացման մեջ մեր երկրում:

Ա. Քոսյանը ծնվել է 1956 թ. մայիսի 18-ին Երևանում: 1973–1977 թթ. սովորել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմաաշխարհագրական ֆակուլտետի պատմության և հասարակագիտության բաժնում: 1978 թ. Ա. Քոսյանն աշխատանքի է անցել Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնում:

1981–1982 թթ. հետբուհական կրթությունը շարունակել է Մոսկվայում՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Սլավոնագիտության և բալկանագիտության ինստիտուտում: Այստեղ նրա ղեկավարն է եղել հայտնի բանասեր Վյաչեսլավ Իվանովը: Ա. Քոսյանը Հայաստան է վերադարձել նոր գիտելիքներով զինված՝ տիրապետելով հին (սեպագիր խեթերեն, սեպագիր լուվիերեն, հիերոգլիֆային լուվիերեն, աքքադերեն, ուրարտերեն) և ժամանակակից (ռուսերեն, անգլերեն, գերմաներեն) լեզուների: Հետագայում նա վերապատրաստվել է նաև արևմտյան գիտական կենտրոններում, մասնավորապես՝ Քլիվլենդի պետական համալսարանում (ԱՄՆ, 1994–1995 թթ., Ֆուլբրայթ հիմնադրամ) և Վյուրցբուրգի համալսարանում (ԳՖՀ, 2000–2002 թթ., Հումբոլդտ հիմնադրամ):

1987 թ. Ա. Քոսյանը Երևանում հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական թեզը՝ «Մ. թ. ա. XII–VIII դդ. Փոքր Ասիայի և հարակից շրջանների լուվիական պետությունները» վերնագրով՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1997 թվականին էլ պաշտպանում է դոկտորական

* Ներկայացվել է 07. VI. 2026 թ., ընդունվել է տպագրության 18. VI. 2026 թ.:

ատենախոսություն՝ «Մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և հայկական լեռնաշխարհը» թեմայով:

1995–2001 թթ. եղել է Արևելագիտության ինստիտուտի փոխտնօրեն, իսկ 2011 թ. առ այսօր՝ Հին Արևելքի բաժնի վարիչն է:

Զուգահեռ Ա. Քոսյանը զբաղվել է նաև գիտության կազմակերպմամբ և մանկավարժական գործունեությամբ: Մասնավորապես 2007 թ. դասավանդել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում (2012 թ. սկսած՝ որպես պրոֆեսոր), իսկ 1991–1993 թթ.՝ նաև Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: 2002–2007 թթ. եղել է ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության և հետբուհական կրթության վարչության պետ, որից հետո 2007–2009 թթ.՝ Մանկավարժական համալսարանի Գիտական կենտրոնի տնօրեն:

Ա. Քոսյանը եղել է գիտական մի շարք պարբերականների գլխավոր խմբագիր («Հիմնարար հայագիտություն», «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», «Հին Արևելք»): Հիշատակության արժանի է «Արամազդ. մերձավորարևելյան ուսումնասիրությունների հայկական հանդես»-ը, որը տպագրվել է եվրոպական լեզուներով Երևանում (2006–2017 թթ.) և Օքսֆորդում (2017 թ. մինչ այժմ):

Գիտնականը իր փորձն ու գիտելիքները սիրով փոխանցել և շարունակում է փոխանցել երիտասարդ սերնդին: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել և պաշտպանվում են ատենախոսություններ, զարգացվում են նորարարական թեմաներ: Նշենք նաև, որ Ա. Քոսյանը նպաստում է ակադեմիական գիտելիքի հանրայնացմանը հիմնական և ավագ դպրոցներում՝ հեղինակելով Հին աշխարհի պատմության, Համաշխարհային պատմության, Հայաստանի հարակից երկրների պատմության դասագրքերի համապատասխան հատվածները:

Ա. Քոսյանի գիտական ժառանգությունը, որը ներկայացված է 150-ից ավել հրապարակումներով, ընդգրկում է աշխարհագրական բավականին լայն տարածք (Հայկական լեռնաշխարհ, Փոքր Ասիա, Միջագետք) և ժամանակաշրջան (մ. թ. ա. III հազ. – I հազ. կեսեր)՝ առնչվելով հին արևելագիտության (հատկապես՝ խեթագիտության) և հնագիտության ամենատարբեր խնդիրներին: Այդ աշխատանքները, թեև հիմնականում գրված են օտար (հատկապես՝ խեթա-լուվիական) աղբյուրների տեղեկությունների հիման վրա, սակայն էապես ուղղված են Հայկական լեռնաշխարհի հնագույն պատմության և մշակույթի խնդիրների վերհանմանը: Ա. Քոսյանն այն բացառիկ հայ հեղինակներից է, որի հոդվածները դեռևս խորհրդային տարիներին տպագրվում էին միջազգային հեղինակավոր հանդեսներում:

Ա. Քոսյանի գիտական գործունեության վաղ շրջանի աշխատանքները վերաբերում են ուշ խեթական/լուվիական թագավորությունների (մ. թ. ա. XII–VIII դդ.) քաղաքական պատմությանը, տեղանվանաբանությանը, հիերոգլիֆ լուվիերեն լեզվի և հայ-լուվիական լեզվական առնչությունների քննարկմանը: Այդ աշխատանքներից առանձնապես հիշարժան է «Փոքր Ասիայի և հարակից շրջանների լուվիական թագավորությունները մ. թ. ա. XII–VIII դարերում. ըստ հիերոգլիֆ

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2026 № 2

լուվիական աղբյուրների» (1994) աշխատությունը, ինչպես նաև բազմաթիվ հոդվածներ՝ տպագրված միջազգային հայտնի գրախոսվող հանդեսներում: Նշենք, որ նույն ժամանակագրական համատեքստում հեղինակն անդրադարձել է նաև ուրարտագիտական տարբեր հարցերի:

Հեղինակի հիմնական աշխատանքները վերաբերում են խեթական թագավորության (մ. թ. ա. XVII–XIII դդ.) վարչաքաղաքական և էթնիկ պատմությանը, պատմական աշխարհագրությանը, կրոնին: Դրանց թվում հատկապես հիշարժան են «Խեթական տերությունը և Ախխիյավան (Տրոյական պատերազմը, 1997), «Հայկական լեռնաշխարհի տեղանունները՝ ըստ խեթական սեպագիր աղբյուրների» (2004), «Մ. թ. ա. XIV դարի խեթա-հայասական միջպետական պայմանագրերը» (2016), «Մ. թ. ա. XV դարի խեթական սեպագրական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի մասին» (2018), «Խեթական թագավորություն» (2022) մենագրությունները: Այս աշխատանքներում արևելագետը Փոքր Ասիայի մ. թ. ա. II հազ. իրականությունը ներկայացնելիս հատուկ ուշադրություն է դարձնում Հայկական լեռնաշխարհին (հատկապես վերին-եփրատյան կոնտակտային գոտուն, Իսուվա-Ծոփքի և Հայասա-Բարձր Հայք/Տուրուբերան շրջաններին) վերաբերող խնդիրներին:

Մերձավորարևելյան պատմության և հայ ժողովրդի կազմավորման համատեքստում Ա. Քոսյանը բազմիցս անդրադարձել է հայկական սկզբնաղբյուրների և հատկապես Մովսես Խորենացու հայտնած տվյալներին: Այս հարցի շուրջ հեղինակի հրապարակումներից մասնավորապես կարևոր է «Տուն Թորգոմայ». առասպել և իրականություն (1998) մենագրությունը:

Ա. Քոսյանի գրչին են պատկանում նաև ընդհանրացնող ու միջմասնագիտական ոճի հետազոտություններ, որոնցում, բացի պատմական աղբյուրներից, օգտագործվել են միջմասնագիտական՝ հիմնականում հնագիտական, մշակութաբանական տվյալներ: Այսպես՝ երկու տասնյակից ավել հրապարակումներում հեղինակն անդրադառնում է հինարևելյան պատմության պարբերացման, պատմական գործընթացների վրա շրջակա միջավայրի ազդեցության խնդիրներին, «կոնտակտային գոտի» հասկացությանը և այլն: Այս տեսանկյունից կարևոր է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի հրատարակած «Հայաստանի հարակից երկրների պատմություն» քառահատորյակի առաջին հատորը (2013), որի պատասխանատու խմբագիրը և Փոքր Ասիայի ու Միջագետքի պատմությանը նվիրված առանձին գլուխների հեղինակը Ա. Քոսյանն է:

Այստեղ հատուկ կցանկանայինք անդրադառնալ գիտնականի՝ կլիմայական ճգնաժամերի և պատմական գործընթացների վերաբերյալ իրականացրած հետազոտություններին: Այս համատեքստում հեղինակը հատուկ անդրադարձ է կատարել մ. թ. ա. XII դ. մերձավորարևելյան գլոբալ ճգնաժամին և դրա ազդեցությանը Հայկական լեռնաշխարհի էթնիկ պատկերի վրա. հմմտ. «Մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը» (1999) մենագրությունը:

Այս կապակցությամբ հիշարժան է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի 2025 թ. մրցանակին արժանացած «Հայկական լեռնաշխարհի միջավայրային պատմությունը. շրջակա միջավայր, կլիմայական փոփոխություններ և քա-

ղաքակրթական գործընթացներ (Ք. ա. X–I հազարամյակներ)» (2024) մենագրությունը (համահեղինակ՝ Ե. Գրեկյան): Այս արժեքավոր աշխատանքը քննարկում է չափազանց հավակնոտ խնդիր՝ կլիմայական և բնամիջավայրային փոփոխությունների ազդեցության հարցը տարածաշրջանի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային գործընթացների վրա՝ սկսած Վաղ Հոլոցենից մինչև Ուրարտական թագավորության անկումը, ինչը հայագիտության մեջ նման հարցադրմամբ առաջին համապարփակ ուսումնասիրությունն է: Աշխատությունն ունի միջգիտակարգային բնույթ և միավորում է պատմության, հնագիտության, հնաբուսաբանության, հնակլիմայաբանության, աշխարհագրության, երկրաբանության և բնագիտական այլ ոլորտների տվյալները: Մենագրության տեսական հիմքում ընկած է այն գաղափարը, որ հասարակությունը կոնկրետ էկոհամակարգի բաղադրիչ է, և նրա զարգացման հիմնական ուղղությունները մեծապես պայմանավորված են բնական միջավայրի առանձնահատկություններով: Վերլուծելով Հոլոցենի ընթացքում արձանագրված կլիմայական խոշոր ճգնաժամերը և դրանց ազդեցությունը Առաջավոր Ասիայի ու մասնավորապես Հայկական լեռնաշխարհի հասարակությունների վրա՝ հեղինակները աշխատանքում միջազգային հնամիջավայրային տվյալները համադրում են հնագիտական նյութերի հետ՝ բացահայտելով կլիմայական տատանումների և պատմական գործընթացների միջև առկա հնարավոր կապերը: Հատկանշական է, որ գրքում կլիմայական փոփոխությունները չեն ներկայացվում որպես պատմական զարգացման միակ կամ բացարձակ գործոն. կլիմայական գործոնը դիտարկվում է քաղաքական, տնտեսական, ժողովրդագրական և մշակութային այլ գործոնների հետ փոխկապակցված համակարգում: Հայագիտության տեսանկյունից աշխատության կարևորությունը պայմանավորված է նաև նրանով, որ այստեղ Հայկական լեռնաշխարհի հնագույն պատմությունը քննարկվում է համաշխարհային բնամիջավայրային պատմության լայն համատեքստում: Ցույց է տրվում, որ տարածաշրջանում տեղի ունեցած գործընթացները պետք է դիտարկել ոչ թե մեկուսացված, այլ Առաջավոր Ասիայի և ամբողջ հին աշխարհի քաղաքակրթական զարգացումների շրջանակում: Այդ մոտեցումը հնարավորություն է տալիս նորովի գնահատել Հայկական լեռնաշխարհի դերը հնագույն քաղաքակրթությունների զարգացման գործընթացում:

Փաստորեն, Ա. Քոսյանի երկարատև գիտական աշխատանքի շնորհիվ շրջանառության մեջ են մտել բազմաթիվ նոր տվյալներ, զարգացվել են նոր տեսակետներ և տեսություններ, որոնք գալիս են լույս սփռելու ինչպես հինմերձավորարևելյան (հատկապես՝ փոքրասիական), այնպես էլ Հայկական լեռնաշխարհի հնագույն պատմության ու հայ ժողովրդի կազմավորման ընթացքին վերաբերող բազմաթիվ հարցերի վրա: Կարևոր է, որ այդ խնդիրները ներկայացվել են նաև միջազգային հարթակներում:

Այս վերջին տեսանկյունից տեղին է հիշատակել ևս մի հրապարակում, որն այս դեպքում ոչ թե Ա. Քոսյանի, այլ իրեն նվիրված հրապարակում է: Խոսքը «Աստծո շնորհով. հինանատոլիական ուսումնասիրություններ՝ նվիրված Արամ Քոսյանի 65-ամյակին» (Լեուվեն-Փարիզ-Բրիստոլ, 2023) գրքի մասին է: Ե. Գրեկյանի կողմից խմբագրված այս ծավալուն ժողովածուն ներառում է անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն և իտալերեն լեզուներով 28 գիտական հոդվածներ,

որոնք հեղինակել են Հայաստանի, Իտալիայի, Գերմանիայի, Նիդերլանդների, Լեհաստանի, Հունաստանի, Թուրքիայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Վրաստանի առաջատար համալսարանների ու գիտահետազոտական կենտրոնների ներկայացուցիչները, ինչը վկայում է Ա. Քոսյանի՝ միջազգային գիտական շրջանակներում ունեցած բարձր հեղինակության մասին: Ժողովածուի նպատակն է ոչ միայն մեծարել նշանավոր գիտնականին, այլև ներկայացնել համապատասխան բնագավառում նրա արձանագրած նոր ձեռքբերումները: Այս տեսանկյունից ժողովածուն լիովին արտացոլում է Ա. Քոսյանի գիտական գործունեության լայն ընդգրկումը, որն առնչվում է փոքրասիական բանասիրությանը, խեթագիտությանը, լուվիական ուսումնասիրություններին, ուրարտագիտությանը, պատմական աշխարհագրությանը, հնագիտությանը:

Հոբելյարն այսօր հանդես է գալիս որպես հայ արևելագիտության և հայագիտության այն երևելի ներկայացուցիչը, որի գիտական վաստակը էական ազդեցություն ունի ոլորտի զարգացման վրա: Հայկական հասարակագիտական հանրույթը, բազմաթիվ աշակերտներն ու գործընկերները, երախտագիտությամբ գնահատելով Արամ Քոսյանի բազմամյա գիտական գործունեությունը, մաղթում են նրան ստեղծագործական նոր հաջողություններ ու բեղմնավոր տարիներ՝ ի նպաստ հայկական գիտական մտքի զարգացման:

ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ

Պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն: Գիտական հետաքրքրությունները՝ հնագույն Հայաստանի նյութական ու հոգևոր մշակույթի խնդիրներ: Հեղինակ է 4 մենագրության և 150-ից ավելի հոդվածի: ORCID: 0000-0002-2277-8281. arsen. bobokhyan@sci.am